## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

"______" ___________ 2018թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն N

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N 246-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 705-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2017 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված դահլիճների վարձակալության գումարների չափերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2007 թվականի օգոստոսի 6-ի N 433-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 246-Ա հրամանի 1-ին կետով սահմանված հավելվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 1-ից:

3. Սույն հրամանի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից տրամադրված դահլիճների վարձակալության այն պայմանագրերի վրա, որոնք կնքվել են մինչև սույն հրամանի ուժի մեջ մտնելը:

6/25/2018

X

ՆԱԽԱՐԱՐ՝ Լ. ՄԱԿՈՒՆՑ